ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի ավագանու Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի և Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի մասին որոշումների նախագծերի վերաբերյալ

Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի նախագիծ

Ընդհանուր դիտարկում

Ծրագիրն ունի վերանայման, վերաշարադրելու, միջոցառումներն ու վերջնարդյունքները հստակեցնելու, խմբագրման կարիք՝ հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական զուգումները և առաջարկվող օրինակելի ձևերը:

Այս առումով կարող է օգտակար լինել նաև ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորած **Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (ՀաՄաՏեղ)** ծրագրի մշակած մեթոդական ձեռնարկը տարեկան պլանի կառուցվածքի հստակեցման և չափելի թիրախների սահմանման տեսանկյունից:

Գերակայությունների սահմանում

Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի գերակայությունների բաժինը խճճված է, չկա տրամաբանական մոտեցում գերակայությունների թվարկման մեջ: Հաճախ ներկայացված են քաղաքապետարանի գործառույթները: Տեղ-տեղ առկա են գերակայությունների համընկումներ: Մասնավորապես՝ 11-րդ գերակայության մի մասը՝ «Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում՝ մասնավորապես արտակարգ դրությունների իրավիճակում» որոշ չափով ներառված է 13-րդի մեջ՝ «Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում՝ մասնավորապես արտակարգ դրությունների իրավիճակում», իսկ 9-րդ և 10-րդ գերակայությունները համընկնում են կամ, առնվազն, հստակ տարանջատված չեն:

Որոշ գերակայություններ հասկանալի չեն և բավարար մանրամասնված չեն: Այսպես՝ փաստաթղթում ներկայացված չէ, թե ինչ է 21-րդ գերակայությունում նշված «Երևան քաղաքի հողային ռեսուրսի մշակումը» կամ ինչ է 23-րդ-ում նշված «Քաղաքային միասնական կառավարման կենտրոնի ստեղծումը», ինչով է դա տարբերվում հաջորդ 24-րդ կետում նշված «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացումից»:

Որոշ գերակայությունները հետագայում չեն արտացոլվել ոլորտային ծրագրերում: Օրինակ՝

- 1-ին կետի «Երևանի քաղաքաշինական նոր ռազմավարության» (City Development Strategy) մշակման անհրաժեշտության մասին գերակայությանը չի հաջորդում առարկայական արդյունքահենք ծրագրավորում «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» բաժնում,

- Չնայած 2-րդ «Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մշակված նախագծերի գործող համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմում (զոնինգ) ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջնահերթ մշակման գոտիներ առանձնացնելու սկզբունքով» գերակայությունը, «Քաղաքաշինություն և Ճարտարապետություն» բաժնում բացակայում են համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքների հետ փոխկապակցված գործողությունները:
- Նույն կետի «գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմելուն վերաբերող գերակայությունն արտացոլված չէ գործողություններում: Միայն նախատեսված է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման նախագծի մշակում, որտեղ արտացոլված չէ «միասնական գոտևորման հատակագծի» դրույթը:

Գերակայությունների մեջ նշված չեն այնպիսի կարևորագույն խնդիրներ, որոնց լուծումն օրհասական է մայրաքաղաքի համար: Այդպիսիք են՝

- տրանսպորտային ծանրաբեռնվածությունը, խցանումները, աղմուկը և քաղաքային ստրեսը, որը որևէ կերպ չի համապատասխանում ՝ հիմնականում պայմանավորված խիտ կառուցապատմամբ և ավտոմեքենաների պահանջարկի աճով.
- աղբահանության ու սանիտարական մաքրման հարցերը, որոնց վիճակը օրեցօր վատթարանում է քաղաքում.
- պատմամշակութային ժառանգության (ինչպե՛ս առանձին ճարտարապետական հուշարձանների, այնպես էլ՝ պատմական միջավայրի) կորուստը, այն դեպքում, երբ միաժամանակ փաստաթղթում Երևանը հռչակվում է որպես «ավանդույթների քաղաք»:

27-րդ կետով նշված գերակայությունը՝ «Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատման պահպանումը» իրավիճակի արձանագրում է: Քույր քաղաքների հետ կնքված հուշագրերի, համաձայնագրերի և պայմանագրերի շրջանակներում համագործակցությունը ինքնին չի կարող լինել գերակայություն. այն ենթադրաբար պետք է ծառայի առաջնահերթ խնդիրների լուծման (իրական գերակայությունների) սպասարկմանը:

Առաջարկ.

1. Վերանայել/վերադասավորել/խմբավորել գերակայությունների ցանկը, միգուցե կրճատել և հստակեցնել գերակայությունները: Դրանց մեջ Երևանի քաղաքապետարանի իրավասությունների ողջ շրջանակը ներկայանելու փոխարեն կենտրոնանալ հնգամյա ծրագրի վերջին տարվա իրական առաջնահերթությունների վրա՝ որոնցով ակնկալվում է առնվազն ապահովել 2018 թվականի Երևան քաղաքի ավագանու ընտրություններում ընտրողներին տրված խոստումների իրականացումը:
2. Գերակայությունները արտացոլել համապատասխան ոլորտային ծրագրերում՝ ներկայացնելով նույն հերթականությամբ:

3. Գերակայությունների մեջ ներառել
    a. քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածության խնդրի լուծումը,
    b. աղբահանությունն ու սանիտարական մաքրումը և
    c. պատմամշակութային ժառանգության պահպանությունը:
4. Գերակայությունների ցանկից հանել 27-րդը, փոխարենը այն մանրամասնել համապատասխան բաժնում՝ ներկայացնելով, թե ինչով է ծառայեցվում գերակա խնդիրների լուծմանը:

Հիմնախնդիրների ձևակերպում

Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի գրեթե բոլոր բաժիններում սխալ են ձևակերպված հիմնախնդիրները (problem): Օրինակ՝

- Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտություն՝ Երևան համայնքի բյուջերի ապահովում,
- Բժշկական ծառայությունների որակի բարելավում,
- Բժշկական ծառայությունների ծավալի ավելացում,
- Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորում

Հիմնախնդիր կարող են համարվել բժշկական ծառայությունների ցածր որակը կամ ոչ բավարար ծավալը, մինչդեռ վերը թվարկվածները պետք է լինեն այդ հիմնախնդիրների լուծումը՝ խնդիրը (objective):

Այս սխալ ձևակերպումները փաստաթղթում տարածված են և չեն սահմանափակվում վերոնշյալ օրինակներով:

Առաջարկ.

5. Առաջնորդվել ծրագրում առկա դրական օրինակով և ուղենիշ դիտարկել տրանսպորտի բաժնի ձևակերպած հիմնախնդիրները, օրինակ՝ Միասնական սակագնային և տոմսային համակարգի բացակայություն կամ Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը համալրված չեն:

Շեղումներ հնգամյա ծրագրից

2023թ.-ի զարգացման ծրագրում շատ են ծրագրերը, որոնք բացակայում են Երևանի զարգացման 2018-2023 հնգամյա ծրագրում, ընդ որում առկա չեն դրանց հիմնավորումները: Օրինակ՝ հնգամյա ծրագրում առկա է «Համայնք–մասնավոր հատված համագործակցությամբ Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցում, որը նաև ենթադրում էր 2023թ.-ի համար գործողությունների ծրագիր, սակայն 2023թ.-ի ծրագրում դրա մասին խոսք չկա:

Խնդիրը 2023թ.-ի զարգացման ծրագրում համակարգային բնույթ է կրում և չի սահմանափակվում վերոնշյալ օրինակով:

Առաջարկ.

6. Երևանի զարգացման հնգամյա ծրագրից շեղումների դեպքում ոլորտային նկարագրությունների բաժնում ավելացնել համապատասխան հիմնավորումները կամ վերանայել դրանց նպատակահարմարությունը:

Նախորդ տարվա միջոցառումների կրկնություններ

Շատ ծրագրեր նախորդ տարվա կրկնությունն են: Խոսքը ոչ միայն տարվա ընթացիկ ծրագրերին է վերաբերվում, այլ նրանց, որոնք նախատեսվում էին ավարտել 2022թ.-ին: Օրինակ՝ նախորդ տարվա ծրագրով նախատեսվում էր «Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը»: Նույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2023թ.-ին, ընդ որում անհասկանալի է և բացակայում է հիմնավորումը թե ինչու կայքը ստեղծված չէ:

Խնդիրը 2023թ.-ի զարգացման ծրագրում համակարգային բնույթ է կրում և չի սահմանափակվում վերոնշյալ օրինակով:

Առաջարկ.

7. Նախորդ տարիների միջոցառումների կրկնությունների դեպքում ավելացնել հիմնավորումներ համապատասխան ոլորտային նկարագրությունների բաժնում, թե ինչու չի կատարվել միջոցառումը:

Քաղաքապետարանի գործառույթները կրկնող ձևակերպումներ

2023թ.-ի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի զգալի մասը ընթացիկ վարչարարություն են ենթադրում և կապ չունեն զարգացման ծրագրերի հետ: Դրա արտացոլումն է թե տարեցտարի կրկնվող ծրագրերը, թե այդ ծրագրերում բացակայող սահմանված չափելի արդյունքները: Օրինակ՝ հանրակրթության 8-րդ ծրագրով «Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկումը», ըստ որի նախատեսվում է «Վարչության և դպրոցների հաղորդակցության արդյունավետ ձևաչափի մշակում և գործարկում», «Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումների վաղ հայտաբերման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացում», ինչը Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հիմնական վարչարարության արտահայտումն է: Ասվածը առավել հիմնավոր և պատկերավոր է դառնում որպես ծրագրի հիմնական շահառու առաջինը վարչության աշխատակիցներ նշված լինելու փաստով:

Առաջարկ.

8. Վերանայել, խմբագրել և հանել գործառույթները կրկնող ձևակերպումները կամ վերաձևակերպել դրանք՝ ներկայացնելով ակնկալվող արդյունքները չափելի ցուցանիշներով:

Նախատեսվող ծրագրերի աղյուսակներ

Ոլորտներում նախատեսվող ծրագրերի աղյուսակներում «Ծրագրի անմիջական նպատակ» սյան մեջ նշված նպատակը գերակշիռ դեպքերում աննշան է տարբերվում ծրագրի անվանումից: Օրինակ՝

- «Արտաքին ձևավորում և գովազդ» բաժնում՝ 1-ին կետը ձևակերպված է հետևյալ կերպ. «Նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանվականգառների, և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում»: Մինչդեռ պարզ չէ, թե քանի՞ նման մրցույթ է նախատեսվում:
- «Առևտուր և ծառայություններ» ոլորտում 2-րդ ծրագրում նշված է «կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ»: Պարզ չէ, թե ինչ է նշանակում «կտրուկ» և ինչպես է այն չափվելու:

Որոշ դեպքերում ներկայացվում է իրավիճակը. Օրինակ՝ «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» բաժնի աղյուսակում ներկայացված Երևանի 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասի վերակառուցում միջոցառման «Անմիջական նպատակի» տակ ներկայացված է, թե ինչ աշխատանքներ են կատարվել և ինչ իրավիճակ է: Ընդ որում, տվյալներից որոշները (չօտարված գույքի մասին) ներկայացված են կառուցապատողների կողմից ներկայացված բանավոր տեղեկատվության վրա, ինչով նաև կասկածի տակ է դրվում դրա արժան ահավատությունը և քաղաքապետարանի կողմից պատշաճ վերահսկողությունը:

Խնդիրը 2023թ.-ի զարգացման ծրագրում համակարգային բնույթ է կրում և չի սահմանափակվում վերոնշյալ օրինակներով:

Առաջարկ.

9. Հստակեցնել «Ծրագրի անմիջական նպատակները». վերացնել իրավիճակի նկարագրությունը և փոխկապակցել նպատակը գերակայությունների հետ:
10. Սահմանել արդյունքի գնահատման այնպիսի չափելի ցուցանիշներ, որպեսզի թե՛ քաղաքապետարանի, թե հանրության համար հնարավոր լինի վերահսկել և գնահատել ծրագրերի կատարումը, ինչպես նաև քաղաքապետարանի համար ավելի առարկայական դարձնել իր աշխատանքի հաշվետվողականությունը:

Ոլորտային խնդիրներ և առաջարկություններ

Առողջապահություն

11. Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի առողջապահության բաժնի նախատեսվող ծրագրերում հստակեցնել գերակայություններում նշված մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը միտված ծրագրի կամ ծրագրերի անմիջական նպատակները, ինչպես նաև ցույց տալ, թե ինչպես են առողջապահական ծառայություններից օգտվելու պատերազմից հետո բացահայտված՝ խոցելիություն ունեցող խմբերը:

Բնապահպանություն

12. Հստակեցնել, թե ինչ գործողություններ են ձեռնարկվելու Նորքի անտառի պահպանման ու վերականգման ուղղությամբ, նույնիսկ եթե անտառի պահպանության առաջնային պատասխանատուն Երևանի քաղաքապետարանը չէ:
13. Բնապահպանության կամ Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման բաժնում նախատեսել շատրվանների վերանորոգման կամ նորերի կառուցման միջոցառումը, որպես նաև քաղաքի միկրոկլիմայի վրա բարենպաստ ազդող միջոց:

Կոմունալ տնտեսություն

14. Կոմունալ տնտեսության բաժնի նկարագրական մասում հիմնավորել, թե արդյո՞ք կոմունալ տնտեսության բաժնում «Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների պլանավորմանը նախորդել է ծախսերի արդյունավետության գնահատում առ այն, թե որքանով է ավելի շահավետ կարճաժամկետ և երկարաժամկետ տեսանկյունից միայն LED տիպի լուսատուների տեղադրումը, ինչպես նաև հիմնավորել այս մոտեցման արդյունավետությունը հռչակված գերակայությունների տեսանկյունից, որտեղ նաև հստակ նշված է էներգախնայող համակարգերի ներդրման և էներգետիկ անվտանգության բարձրացման անհրաժեշտությունը:
15. Ուսումնասիրել և գնահատել աղբահանման և սանիտարական մաքրման գործառույթի իրականացմանն առնչվող խոչընդոտները, համակարգային լուծման հնարավորությունները և անհրաժեշտ միջոցները:
16. Վերանայել վերելակային տնտեսության հետ կապված մոտեցումները: Մի կողմից զգալի միջոցներ են ծախսվում և արդիականացվում է քաղաքի վերելակային համակարգը, մյուս կողմից՝ վարչական շրջանների թողտվությամբ և համատիրությունների մասնակցությամբ տեղի է ունենում վերելակների ֆիզիկական փչացում՝ դրանցում տարբեր չափերի և բովանդակության գովազդային վահանակներ տեղադրելու միջոցով՝ հատկապես ընտրական ժամանակահատվածում:

Հանրակրթություն

17. Վերանայել նախադպրոցական ոլորտի «Նյութատեխնիկական բազայի համալրում նախադպրոցական ուսումնական հաստատություններում» ծրագրի շահառուների ցանկը, որտեղ անհասկանալիորեն ներառված են Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության աշխատակիցները:

Միջազգային համագործակցություն

18. Միջազգային համագործակցության բաժնում թվարկված քույր/գործընկեր քաղաքների հետ կնքված բոլոր հուշագրերի, համաձայնագրերի ու պայմանագրերի ցանկին զուգահեռ ավելացնել համապատասխան վերաբերելի ոլորտները, համագործակցության արդյունքները, փորձը, օգուտը Երևան քաղաքի և քաղաքապետարանի համար:
19. Նախանշել համագործակցության այն ուղղությունները, որոնք կկարևորվեն 2023 թվականի ընթացքում՝ ելնելով հռչակված նպատակներից և գերակայություններից:

Մշակույթ

20. Մշակույթ բաժնում «Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունները» փոխարինել «Երևանի քաղաքապետարանի ենթակայության մշակութային կազմակերպություններ» բառակապակցությամբ:

Շինարարություն և բարեկարգում

21. Շինարարություն և բարեկարգման բաժնում ստորգետնյա և վերգետնյա անցումների կառուցման միջոցառման մեջ նշել, թե որքանով է դա մատչելի դարձվելու տարեցների, մանկասայլակով տեղաշարժվող մեծահասակների, հաշմանդամություն ունեցող անձանց համար (օրինակ՝ վերելակի կամ էսկալատորի առկայություն) կամ վերանայել առաջարկվող միջոցառումը:
22. Հստակեցնել, թե ինչ հիմքով են հուշարձանների վիճակի նկարագրությունը ներառված «Շինարարություն և բարեկարգում» և ոչ «Մշակույթ» կամ «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» բաժիններում:

Տրանսպորտ

23. Տրանսպորտի բաժնի նկարագրական մասում ավելացնել առաջարկվող հանրային տրանսպորտի միջոցների արդյունավետությունը դրանց ուղևորափոխադրման ծավալի, երթուղիների և քաղաքի բնակիչների տեղաշարժով պայմանավորված պահանջարկի համեմատությամբ:
24. Ավելացնել, թե ինչպես է տրասպորտային միասնական համակարգի ձևավորման գործընթացը հաշվի առնելու խելացի կառավարման մոտեցումները:
25. Հստակեցնել, «Միասնական տոմսային համակարգի ներդրում» ծրագիրն ինչ հիմնավորմամբ է նախատեսված իրականացնել մասնավոր աղբյուրներից ստացված

ֆինանսավորմամբ, եթե հանրային տրանսպորտի համակարգն այսօր Երևանում համայնքային սեփականության է:

26. Չափելի դարձնել երկու ստորգետնյա կայանատեղի ստեղծումով նախատեսվող հետևյալ ամբիցիոզ նպատակը. «Երևանի առկա հասարակական, խոշոր վարչական, բազմագործառույթ օբյեկտներով խիտ կառուցապատված միջավայրում կայանատեղերի կազմակերպման քաղաքաշինական կարևորագույն պրոբլեմի՝ քաղաքային միջավայրում տրանսպորտային երթևեկության կազմակերպման պայմանների բարելավման (փողոցների թողունակության բարձրացման) և ավտոտրանսպորտային միջոցների կայանման ու պահպանման ապահովման խնդիրների լուծում, այդպիսով բարենպաստ կենսամիջավայրի կազմակերպում, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում, հետիոտնային ուղիների ազատագրում և անվտանգ շարժման կազմակերպում, գոտու բարեկարգմամբ սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավում, արտանետումների կանխարգելում, զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում և այլն»:

Քաղաքաշինություն և ճարտարապետություն

27. Հստակեցնել, ինչ հիմքով են Քաղաքաշինություն և ճարտարապետություն բաժնում առանձնացված ներկայացված «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակում» և «Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծ» գործողությունները, եթե պատմամշակութային հիմնավորման նախագծերը ՀՀ օրենսդրության համաձայն համարվում են գլխավոր հատակագծի համար ելակետային նյութ: Նաև պարզաբանել, թե ինչով է հիմնավորվում Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նոր նախագծի անհրաժեշտությունը, եթե գործողը մշակվել է 2010-ական թվականներին:
28. Հստակեցնել, թե ինչ միջոցառում է նախատեսվում՝ ապահովելու հուշարձանների պահպանական գոտիների ձևավորումը, որը դեռևս առկախված է:
29. Հստակեցնել, ինչպես է Երևանի քաղաքապետարանը երաշխավորելու, որպեսզի քաղաքի տարածքում գտնվող՝ վթարային վիճակում գտնվող պատմամշակութային հուշարձանները չվնասվեն կամ չփլուզվեն մինչև համապատասխան որոշումների կայացումը:
30. Ավելացնել միջոցառում, թե ինչպես է ապահովելու տեղափոխման ենթակա և ներկայումս ապամոնտաժված շենքերի քարերի պահպանությունը:
31. Պատմության և հուշարձանների ցուցակում ներառված բոլոր հուշարձանների տարածքում տեղադրել տեսախցիկներ՝ բացահայտելու հաճախակի վանդալիզմի դեպքերը.
32. Վերանայել «Երևան քաղաքում նոր ճոպանուղու կառուցման ներդրումային ծրագիր» և «Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցում՝ «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև» գործողությունները, որոնք հակասում են գործող գլխավոր հատակագծին: Ընդ որում, «Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցում՝ «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև» ծրագիրը հակասում է գործող Շինարարական նորմին, մասնավորապես «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և

կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014-ին, որտեղ կետ 285-ով մետրոպոլիտենի կայարանների հեռավորությունը պետք է կազմի 1000-1200 մետր: Տվյալ դեպքում կայարանների միջև հեռավորությունը 1750 մետր է:

33. Հստակեցնել, թե ինչ է նախատեսվում անել Կորյունի փողոց – Նորք կիսաքանդ ճոպանուղու հետ, ինչ հիմնավորմամբ է այն մատնված անտերության, և փոխարենը նախատեսվում է կառուցել նոր՝ գլխավոր հատակագծին հակասող մեկ այլ ճոպանուղի:
34. Հաշվի առնելով Երևան քաղաքի առանձին հատվածներում ծայրահեղ խիտ կառուցապատումը և դրանով պայմանավորված տրանսպորտային ծանրաբեռնվածությունը, աղմուկը և ստրեսը, օրինակ՝ Կենտրոնում և Արաբկիրում, սառեցնել շինթույլտվությունների տրման գործընթացը՝ մինչև գլխավոր հատակագծի (գլխավոր քաղաքային պլանի/ռազմավարության) մշակման աշխատանքների ավարտը, նոր հարացույցի/պարադիգմի որոշումը:
35. Մշակել գերեզմանատների կառավարման, այդ թվում՝ սանիտարական մաքրման և դիակիզարանի կառուցման հայեցակարգ:

Վարչական շրջանների ծրագրեր

36. Ամբողջությամբ վերանայել վարչական շրջանների համար նախատեսված գործողությունները, դրանց տրամաբանությունը և հիմքերը: Պարզվում է, որ միայն Կենտրոն վարչական շրջանում կա ալկոհոլային և թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց հարկադիր բուժման վերականգնման անհրաժեշտություն և Ընտանեկան բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարանով ապահովման անհրաժեշտություն, իսկ հասարակական զուգարանների վիճակը խնդրահարույց է միայն Արաբկիր և Մալաթիա-Սեբաստիա համայնքներում: Վարչական նման միջոցառումները կախված չեն տարածքային զարգացման առանձնահատություններից և տրամաբանական է, որ ունենան միասնական լուծում:

<u>Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի նախագիծ</u>

Երևանի զարգացման 2023 թվականի ծրագրի և բյուջեի ուղերձի նախագծերում նշված գերակայությունները տարբերվում են, մինչդեռ բյուջեն ծրագրի իրականացման ֆինանսական փաստաթուղթն է:

Բացի այդ, ուղերձում չի բացատրվում համայնքի սեփական միջոցների հաշվին իրականացվող ներդրումների (ծախսերի) արդյունավետությունը՝ պայմանավորված զարգացման ծրագրի հռչակած նպատակներով և սահմանած գերակայություններով:

Դիտարկումները ցույց են տալիս, որ գրեթե չեն իրականացվում քաղաքաշինության ոլորտում հանրային իրազեկումն ու քննարկումները, որոնք նախատեսված են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13-14-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ կառավարության հոկտեմբերի 25-ի 1998 թվականի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և

որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N660 որոշմամբ:

Երևանի քաղաքապետարանի թեժ գիծն աշխատում է միայն աշխատանքային ժամերին և քաղաքապետարանը չի կարողանում պատշաճ ժամկետներում և որակով արձագանքել քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրներին:

Առաջարկ.

1. Համադրել և համապատասխանեցնել Երևան քաղաքի զարգացման ծրագիրը և դրա բյուջեն, այդ թվում՝ ավելացնելով և արտացոլելով Երևան քաղաքի 2023 թվականի զարգացման ծրագրի վերաբերյալ ներկայացված առաջարկություններին առնչվող ծախսերը.
2. Ներառել համառոտ հիմնավորում՝ բացատրելով համայնքի սեփական միջոցների հաշվին իրականացվող ներդրումների (ծախսերի) արդյունավետությունը.
3. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեով նախատեսել բավարար միջոցներ ապահովելու 2023 թ. ծրագրով նախատեսված քաղաքաշինական ծրագրերի հանրային իրազեկումը և քննարկումները՝ ՀՀ օրենսդրության համաձայն.
4. Նախատեսել բավարար միջոցներ՝ ապահովելու թեժ գծի շուրջօրյա 7/24 ռեժիմով աշխատանք՝ երաշխավորելու քաղաքացիների բարեկեցությունը և պահանջվող ծառայությունների որակը: